ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Սիսիան **08/11/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 17 անդամներ:

Բացակա էին՝ Անի Հարությունյանը, Մարինե Գրիգորյանը, Ավագ Ասատրյանը, Աննա Ավետիսյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝

Աննա Կարապետյանը, Անի Սահակյանը, Երվանդ Եղիազարյանը, Գոհար Սրապյանը, Դավիթ Այվազյանը, Կորյուն Մուրադյանը, Նարա Հովհաննիսյանը, Վեյնամին Թանգյանը, Արմեն Խաչատրյանը, Սուսաննա Սահակյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հովսեփ Առաքելյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կարեն Իվանյանը

Ավագանու նիստն իրավազոր էր, և այն հայտարարվեց բացված:
Նիստն ուղիղ հեռարձակվում էր:

Նորընտիր համայնքի ղեկավար Հ. Առաքելյանը նախքան նիստը սկսելը շնորհավորեց ավագանու անդամներ Դավիթ Հարությունյանին և Անահիտ Գևորգյանին ավագանու անդամ դառնալու կապակցությամբ, և մաղթեց բեղուն աշխատանք:

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի 2024 թվականի նոյեմբերի 8-ի հերթական նիստի օրակարգը.
   1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման երկրորդ եռամսյակի ընթացքի մասին.
   2) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման երրորդ եռամսյակի ընթացքի մասին.
   3) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 99-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.

4) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականության իրավունքով պատկանող գույքի դուրսգրման փաստաթղթերը հաստատելու մասին.
5) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) ստանալու նպատակով 2025 թվականին բյուջետային ֆինանսավորման ծրագրային հայտեր ներկայացնելուն համաձայնություն տալու մասին.
6) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ նշանակելու մասին.
7) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին.
8) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 21-ի թիվ 09-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
9) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սյունիք 4 և Սյունիք 6 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Սիսիան համայնքի Ախլաթյան, Անգեղակոթ, Աղիտու, Աշոտավան, Արևիս, Բալաք, Բնունիս, Բռնակոթ, Գետաթաղ, Դաստակերտ, Դարբաս, Շամբ, Թանահատ, Թասիկ, Իշխանասար, Լծեն, Լոր, Հացավան, Մուցք, Նժդեհ/Ցղունի/, Նորավան, Շաղատ, Շաքի, Շենաթաղ, Որոտնավան, Սալվարդ, Վաղատին, Տոլորս, Տորունիք, Ույծ, Ծղուկ, Սպանդարյան, Սառնակունք, Գորայք բնակավայրերի գլխավոր հատակագծերի նախագծերը (գոտևորման նախագծերը) և Սիսիան քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակված տարբերակի նախագիծը (գոտևորման նախագիծը) հաստատելու մասին.
10) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին.
11) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին.
12) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաքի բնակավայրի դպրոցական շենքի կառուցման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին.
13) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Իշխանասար բնակավայրում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և Հայաստանի Հանրապետությանը հողամաս նվիրաբերելու մասին.
14) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Անգեղակոթ բնակավայրի վարչական սահմաններում նախատեսվող հանքարդյունահանման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին.
15) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Որոտնավան բնակավայրի վարչական սահմաններում նախատեսվող հանքարդյունահանման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին.
16) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաքի բնակավայրի վարչական սահմաններում նախատեսվող հանքարդյունահանման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին.
17) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաքի բնակավայրի վարչական սահմաններում նախատեսվող հանքարդյունահանման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին.
18) Սիսիան համայնքում 2024 թվականի աշնանը ծառերի հատում ու էտ իրականացնելու մասին.
19) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 16-ի թիվ 020-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին.
20) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին.
21) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաքի բնակավայրի վարչական սահմաններում նախատեսվող հանքարդյունահանման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին.

22) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Նորավան բնակավայրում գտնվող անշարժ գույքը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու մասին.
23) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Իշխանասար բնակավայրի դպրոցական շենքի կառուցման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Մինչ օրակարգը հաստատելը ՔՈ խմբակցության ավագանու անդամ Հայկ Հակոբյանը առաջարկեց օրակարգից հանել 9-րդ հարցը, քանի որ հին նախագիծն է, մշակված չէ:
Աշխատակազմի քաղաքաշինության բաժնի գլխավոր մասնագետ, բաժնի պետի պարտականությունները կատարող Վ. Թանգյանը պատասխանեց, որ Հակոբյանի դիտողությունը ճիշտ է, առարկել են քաղաքաշինության կոմիտեին և մրցույթը կոմիտեն է հայտարարել: Զեկուցեց, որ բազմիցս դիտողություններ կատարել են, քանի որ միայն Սիսիան քաղաքը ունի գլխավոր հատակագիծ, բայց այս պահին եթե չընդունեն նախագիծը, համայնքը բնակավայրերում ոչ մի գործ չի կարող կատարել, հատկապես շինարարության թույլտվություն, ավարտական ակտ չեն կարող տրամադրել: Կառավարության 698-Ն որոշումով հաստատված կարգի հիման վրա կարող են հաստատել, այնուհետև փուլ առ փուլ լրամշակվի և քննարկվի, ուղարկվի փոփոխությունները կատարեն:
Օրակարգը դրվեց քվեարկության:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 090-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով.

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավար Հ. Առաքելյանի հաղորդումը Սիսիան համայնքի բյուջեի 2024 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքի մասին՝ համաձայն բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության 1-5 հատվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Զեկուցող Դ. Այվազյանը ներկայացրեց 2024թ. բյուջեի կատարման երկրորդ եռամսյակի ընթացքի մասին՝ եկամտային և ծախսային մասերով:
Հարց ու պատասխանից հետո հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 091-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավար Հ. Առաքելյանի հաղորդումը Սիսիան համայնքի բյուջեի 2024 թվականի երրորդ եռամսյակի ընթացքի մասին՝ համաձայն բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության 1-5 հատվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ Դ. Այվազյանը ներկայացրեց նաև 2024թ. բյուջեի կատարման երրորդ եռամսյակի ընթացքի մասին՝ եկամտային և ծախսային մասերով:
Հարց ու պատասխանից հետո հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-14 Դեմ-1 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 092-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 99-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 83-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով ու «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 99-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝
   1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «եկամուտների գծով՝ 2684999.5 հազար դրամ» բառերը փոխարինել «եկամուտների գծով՝ 2685439.3 հազար դրամ» բառերով.
   2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ծախսերի գծով՝ 3564292.0 հազար դրամ» բառերը փոխարինել «ծախսերի գծով՝ 3564731.7 հազար դրամ» բառերով.
   3) որոշման 2-րդ կետի 1-ին հատվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելված 1-ի.
   4) որոշման 3-րդ կետի 2-րդ հատվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելված 2-ի.
   5) որոշման 4-րդ կետի 3-րդ հատվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելված 3-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ Դ. Այվազյանը զեկուցեց, որ բյուջեում փոփոխությունները նախատեսվում են հիմք ընդունելով աշխատակազմի բաժնի պետերի զեկուցագրերը: Ավելացրեց նաև, որ համայնքի բյուջեի եկամուտներն ու ծախսերը կավելանան 439759 ՀՀ դրամով:
Հարց ու պատասխանից հետո դրվեց քվեարկության:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 093-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, և «Պետական կառավարչական հիմնարկների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքի դուրսգրման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 787-Ն հրամանով ու նկատի ունենալով գույքի դուրսգրման հանձնաժողովների եզրակացությունները և համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականության իրավունքով պատկանող գույքի դուրսգրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Դ. Այվազյանը զեկուցեց, որ կազմվել է գույքի դուրսգրման հանձնաժողով, որն իր իրավասության շրջանակներում կազմակերպել է համայնքային սեփականության գույքի դուրսգրման աշխատանքները: Համակարգչային տեխնիկայի համար Ա/Ձ Վարդան Պետրոսյանը ուսումնասիրել և տվել է եզրակացություն, կազմվել են գույքի դուրսգրման ակտեր, որոնք հաստատվել են ստեղծված հանձնաժողովի կողմից և տրվել է դրական եզրակացություն:
Քննարկվեց և հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 094-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ (ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ) ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՐՎԱՆԴ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 25-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N1708-Ն որոշումն ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

1. Տալ համաձայնություն ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) ստանալու նպատակով Սիսիան համայնքի 2025 թվականի բյուջետային ֆինանսավորման ներկայացվող հետևյալ ծրագրային հայտերին՝
   1) Սիսիան քաղաքի Այգեստան, Գետափնյա, Անդրանիկ Մանուկյան, Արցախի, Լալայան, Մ.Գորկի փողոցների հիմնանորոգում.
   2) Սիսիան քաղաքի Գայի 1, 2, 4, 6, 7, 10, 12, 13, 14, 15, Զորավար Անդրանիկ 1, 3, 5, Շահումյան 72, 74, շենքերի բակային փողոցների, Զորավար Անդրանիկ, Հ.Որոտնեցի փողոցների վերջնամասի կապիտալ վերանորոգում.

3) Սիսիան քաղաքի Դուրյան 2, Սիսական 9, 11, 13, 15, 19, Ադոնցի 3, Իսրայելյան 39, Ա.Մանուկյան 3, 2, 2ա, Նժդեհի 4, Սիսական 46ա, 50, 50ա, Ադամյան 11 շենքերի բակային հատվածների, Շահումյան փողոցի սկզբնամասի հիմնանորոգում:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ե. Եղիազարյանը ներկայացրեց 2025թ. բյուջետային ֆինանսավորման ենթակա ծրագրային հայտերը: Ավելացրեց նաև, որ 2027թ. ըստ հնգամյա զարգացման ծրագրի առաջարկվում է կառուցել կամուրջ, որը նոր հիվանդանոցի շահագործումից հետո կնպաստի երթևեկության ճիշտ կազմակերպմանը:
Եղան նաև առաջարկություններ, և հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 095-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ԻՎԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու անդամ՝ Դավիթ Հարությունի Հարությունյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնում:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի առաջին տեղակալին վերապահել Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և համայնքապետարանի կանոնադրությամբ սահմանված գործառույթներ:
3. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Հ. Հակոբյանը ներկայացրեց, որ ՏԻՄ օրենքով առաջին տեղակալի վրա միայն դրված է՝ փոխարինում է համայնքի ղեկավարին բացակայությունների ժամանակ, պաշտոնատար անձի վրա դրված պարտականությունները ինչպե՞ս են իմանալու:
Աշխատակազմի քարտուղարը զեկուցեց, որ գործող կարգի համաձայն համայնքի ղեկավարի ներկայացմամբ տեղակալներին վերապահվելու է գործառույթներ: 1-ին տեղակալը կհամակարգի բաժինների աշխատանքը, իսկ մյուս տեղակալի դեպքում օրենքում հստակ վերապահված է աշխարհազորի գծով (հրամանատարի) գործառույթներ:
Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-13 Դեմ-4 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 096-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ԻՎԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասով և 57-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Վարդան Կարոյի Խաչատրյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի տեղակալին վերապահել քաղաքային բնակավայր ընդգրկող կամ միավորված համայնքի աշխարհազորային պայմանական բրիգադի ղեկավարի (հրամանատարի), «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և համայնքապետարանի կանոնադրությամբ սահմանված գործառույթներ:
3. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 097-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի ԹԻՎ 09-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ԻՎԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով ու համայնքի ավագանու կանոնակարգով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 21-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու և դրանց անհատական կազմը հաստատելու մասին» թիվ 09-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն և որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի «Հովսեփ Հրաչի Առաքելյան» բառերը փոխարինել «Անահիտ Աշոտի Գևորգյան» բառերով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 098-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍՅՈՒՆԻՔ 4 ԵՎ ՍՅՈՒՆԻՔ 6 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽԼԱԹՅԱՆ, ԱՆԳԵՂԱԿՈԹ, ԱՂԻՏՈՒ, ԱՇՈՏԱՎԱՆ, ԱՐԵՎԻՍ, ԲԱԼԱՔ, ԲՆՈՒՆԻՍ, ԲՌՆԱԿՈԹ, ԳԵՏԱԹԱՂ, ԴԱՍՏԱԿԵՐՏ, ԴԱՐԲԱՍ, ՇԱՄԲ, ԹԱՆԱՀԱՏ, ԹԱՍԻԿ, ԻՇԽԱՆԱՍԱՐ, ԼՃԵՆ, ԼՈՐ, ՀԱՑԱՎԱՆ, ՄՈՒՑՔ, ՆԺԴԵՀ/ՑՂՈՒՆԻ/, ՆՈՐԱՎԱՆ, ՇԱՂԱՏ, ՇԱՔԻ, ՇԵՆԱԹԱՂ, ՈՐՈՏՆԱՎԱՆ, ՍԱԼՎԱՐԴ, ՎԱՂԱՏԻՆ, ՏՈԼՈՐՍ, ՏՈՐՈՒՆԻՔ, ՈՒՅԾ, ԾՂՈՒԿ, ՍՊԱՆԴԱՐՅԱՆ, ՍԱՌՆԱԿՈՒՆՔ, ԳՈՐԱՅՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԸ (ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԸ) ԵՎ ՍԻՍԻԱՆ

ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՆԱԽԱԳԻԾԸ (ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԵՅՆԱՄԻՆ ԹԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ մասով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 143 -րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ և հաշվի առնելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշումը և ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 3-ի N 2-1 և N 2-2 դրական եզրակացությունները.

1. Հաստատել Սիսիան համայնքի Ախլաթյան, Անգեղակոթ, Աղիտու, Աշոտավան, Արևիս, Բալաք, Բնունիս, Բռնակոթ, Գետաթաղ, Դաստակերտ, Դարբաս, Շամբ, Թանահատ, Թասիկ, Իշխանասար, Լծեն, Լոր, Հացավան, Մուցք, Նժդեհ/Ցղունի/, Նորավան, Շաղատ, Շաքի, Շենաթաղ, Որոտնավան, Սալվարդ, Վաղատին, Տոլորս, Տորունիք, Ույծ, Ծղուկ, Սպանդարյան, Սառնակունք, Գորայք բնակավայրերի գլխավոր հատակագծերի նախագծերը (գոտևորման նախագծերը):
2. Հաստատել Սիսիան համայնքի Սիսիան քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակված տարբերակի նախագիծը (գոտևորման նախագիծը):
3. Գլխավոր հատակագծով սահմանված նպատակային կամ գործառնական նշանակությունները /հողամասերի կատեգորիայի տրանսֆորմացիա/ համարել փոփոխված՝ ապահովելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 143–րդ հոդվածի պահանջները՝ համաձայն հավելվածի:
4. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 15-րդ օրը:

Վ. Թանգյանը հարցի վերաբերյալ ավելացրեց, որ քաղաքաշինության կոմիտեի կողմից տրվել է դրական եզրակացություն: Երկու մրցույթով է տեղի ունեցել, քանի որ այն ժամանակ Գորայքը եղել է առանձին համայնք:
Հ. Հակոբյանը հարցրեց, արդյո՞ք աղբավայրի տեղի, դիրքի վերաբերյալ որևիցե քննարկում եղել է, քանի որ քամին ամբողջ ծուխը արևելքից արևմուտք է տարածում: Հարցրեց նաև ծրագրում ներառվա՞ծ է նոր մանկապարտեզի շենքի կառուցում:
Վ. Թանգյանը պատասխանեց, որ բազմիցս քննարկվել է, միայն աղբավայրի տեղի խնդիրը չէ, գերեզմանատեղի խնդիր ունենք նաև, առաջիկայում կտրվի լուծում:
Իսկ մանկապարտեզի վերաբերյալ համայնքի ղեկավարը պատասխանեց, որ տեղը կա, Սիսիան քաղաքի Կամոյի 5 հասցեում գտնվող նախկին գիշերօթիկ դպրոցի 2-րդ մասնաշենքը: Պետ. գույքի կառավարության կոմիտեին հարցում են կատարել, պատասխանը ստանալուց հետո կսկսեն աշխատանքները:
Հ. Հակոբյանը ավելացրեց, որ բոլոր դպրոցների շինարարությունները, որ կատարվում է հաշվի են առնում սեյսմակայունությունը /9 բալային համակարգ/:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 099-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԵՅՆԱՄԻՆ ԹԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով ու 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի թիվ 1023-Ն որոշմամբ հաստատված կարգը և 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշումն ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը,

1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող Սիսիան քաղաքի Ա.Խանջյան փողոց թիվ 1/9 հասցեում գտնվող 15,1քմ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասն ուղղակի վաճառքի միջոցով 0,00569x15.1x330000=28354 (քսանութ հազար երեք հարյուր հիսունչորս) ՀՀ դրամ կադաստրային արժեքով օտարել Արթուր Վոլոդիայի Սուքիասյանին (անձ.՝ AU0422911, տրված 19.08.2021թ, 051 կողմից):
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 100-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԵՅՆԱՄԻՆ ԹԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով ու 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի թիվ 1023-Ն որոշմամբ հաստատված կարգը և 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշումն ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը,

1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող Սիսիան քաղաքի Իսրայել-Օրի փողոց թիվ 12/1 հասցեում գտնվող 20քմ բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասն ուղղակի վաճառքի միջոցով 1221x20=24420 (քսանչորս հազար չորս հարյուր քսան) ՀՀ դրամ կադաստրային արժեքով օտարել Նաիրի Արարատի Պետրոսյանին (անձ.՝ AT0495182, տրված 26.05.2020թ., 051-ի կողմից):
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 101-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԵՅՆԱՄԻՆ ԹԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով,

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման 28-րդ կետը.

1. Տալ նախնական համաձայնություն Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաքի բնակավայրում դպրոցական շենքի կառուցման աշխատանքներին:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 102-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՇԽԱՆԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԵՅՆԱՄԻՆ ԹԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ և 29-րդ կետերով, Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, Քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն որոշման դրույթների, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» 2024 թվականի հոկտեմբերի 23-ի N 40 դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը.

1. Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Իշխանասար բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, կատարել փոփոխություն՝ համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության 1,15838 հեկտար վարելահողը և 0,05162 հեկտար այլ հողատեսքը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ «հասարակական կառուցապատման հողեր» գործառնական նշանակությամբ:
2. Սույն որոշման 1-ին կետով բնակավայրերի հողերի կատեգորիա փոխադրված 1.21 հեկտար հողամասը, նոր դպրոցական շենքի կառուցման և սպասարկման նպատակով, նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը:
3. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վ. Թանգյանը զեկուցեց, որ Իշխանասարում դպրոցի կառուցման համար պետք է հատկացվի հողատարածք: Նախատեսված հողատարածքը վարձակալությամբ հատկացված հող է, պայմանագիրը լուծարվել է, պետք է նշանակությունը փոխվի, որ տրամադրվի Հայաստանի Հանրապետությանը:

Դ. Դավթյանը հարցրեց ինչո՞ւ հատկացնել ՀՀ-ին, ոչ համայնքին:

Վ. Թանգյանը պատասխանեց, որ հիմնականում բոլոր դպրոցները պատկանում են պետ. գույքի կառավարման կոմիտեին:

Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 103-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԳԵՂԱԿՈԹ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԵՅՆԱՄԻՆ ԹԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ և 16-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման հավելվածի 28-րդ կետը.

1. Տալ նախնական համաձայնություն «ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Անգեղակոթ բնակավայրի վարչական սահմաններում նախատեսվող հանքարդյունահանման աշխատանքներին /բազալտի արդյունահանում/:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վ. Թանգյանը զեկուցեց, որ օրակարգում ներառված 5 հարցերը վերաբերվում են հանրային լսումներին: Եթե կազմակերպությունը կամ բնակիչը դիմել է համայնքին հանրային լսում կազմակերպելու համար, 5 օրվա ընթացքում համայնքը պարտավոր է հայտարարությունը հրապարակի օրաթերթում, դրանից հետո հանրային լսումը պետք է կազմակերպվի 21-25 աշխատանքային օրվա ընթացքում: Հանրային լսումը անցկացնելուց հետո պետք է ներկայացվի ավագանու նիստին: Բոլոր բնակավայրերում անց են կացվել լսումները, տրվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարը հայտնեց, որ ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը որոշել է այսուհետ բնակավայրերում անցկացվող հանրային լսումներին կմասնակցեն, բնակավայրի վարչական ղեկավարի և բնակիչների հետ կխորհրդակցեն, խնդիրները կհասկանան, նոր կքվեարկեն կողմ:

Բուռն քննարկումից հետո հարցը դրվեց քվեարկության և քվեարկության արդյունքներով՝ կողմ-4, դեմ-11, ձեռնպահ-2 որոշման նախագիծը չընդունվեց:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՐՈՏՆԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԵՅՆԱՄԻՆ ԹԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ և 16-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման հավելվածի 28-րդ կետը.

1. Տալ նախնական համաձայնություն «ՀԻԴՐՈ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Որոտնավան բնակավայրի վարչական սահմաններում նախատեսվող հանքարդյունահանման աշխատանքներին/բազալտի արդյունահանում/:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմին և նախաձեռնողին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագիծը դրվեց քվեարկության և քվեարկության արդյունքներով՝ կողմ-4, դեմ-11, ձեռնպահ-2 որոշման նախագիծը չընդունվեց:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԵՅՆԱՄԻՆ ԹԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ և 16-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման հավելվածի 28-րդ կետը.

1. Տալ նախնական համաձայնություն «Ա.Պ.ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաքի բնակավայրի վարչական սահմաններում նախատեսվող հանքարդյունահանման (ավազի և կոպիճի արդյունահանման) աշխատանքներին:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագիծը դրվեց քվեարկության և քվեարկության արդյունքներով՝ կողմ-2, դեմ-13, ձեռնպահ-2 որոշման նախագիծը չընդունվեց:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԵՅՆԱՄԻՆ ԹԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ և 16-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման հավելվածի 28-րդ կետը.

1. Տալ նախնական համաձայնություն «ԱՐՄ.ՍԱՆԴ.ՄԻՇ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաքի բնակավայրի վարչական սահմաններում նախատեսվող հանքարդյունահանման (ավազի և կոպիճի արդյունահանման) աշխատանքներին:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագիծը դրվեց քվեարկության և քվեարկության արդյունքներով՝ կողմ-1, դեմ-14, ձեռնպահ-2 որոշման նախագիծը չընդունվեց:

Լսեցին

ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՇՆԱՆԸ ԾԱՌԵՐԻ ՀԱՏՈՒՄ ՈՒ ԷՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ և 42-րդ կետերով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Շրջակա միջավայրի պահպանությունը կազմակերպելու նպատակով 2024 թվականի աշնանը Սիսիան համայնքում իրականացնել համայնքային սեփականություն հանդիսացող ծառերի հատում և էտ (համաձայն հավելվածի) ու առաջացած վառելափայտը տրամադրել համայնքային ենթակայության կազմակերպություններին և համայնքի կարիքավոր ընտանիքներին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամ Ջ. Մարգարյանը հարցրեց, թե ո՞վ է որոշում որ ծառը պետք է էտվի:

Ա. Խաչատրյանը պատասխանեց, որ հաշվի են առնում բնակիչների դիմումները: Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի մասնագետները ուսումնասիրություններ են կատարում և նոր ներկայացնում են հաստատման:

Ս. Վարդանյանը առաջարկեց կտրված ծառերի տեղը նորը տնկել:

Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 104-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի ԹԻՎ 020-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասով և 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 16-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը բաց մրցույթով վարձակալության տրամադրելու մասին» թիվ 020-Ա որոշման մեջ կատարել լրացումներ և որոշման հավելվածը լրացնել 330-ից 355 կետերով՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հարցը քննարկվեց և դրվեց քվեարկության:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 105-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ԻՎԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի դեկտեմբերի 6-ին, ժամը 16:00-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 106-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԵՅՆԱՄԻՆ ԹԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ և 16-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման հավելվածի 28-րդ կետը.

1. Տալ նախնական համաձայնություն «ՇԱՔԵ-2» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաքի բնակավայրի վարչական սահմաններում նախատեսվող հանքարդյունահանման աշխատանքներին /բազալտի արդյունահանում/:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագիծը դրվեց քվեարկության և քվեարկության արդյունքներով՝ կողմ-2, դեմ-13, ձեռնպահ-2 որոշման նախագիծը չընդունվեց:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԵՅՆԱՄԻՆ ԹԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ և 29-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Նորավան բնակավայրում գտնվող անշարժ գույքը 1,09578հա ընդհանուր մակերեսով /0,50974հա, ծածկագիր՝ 09-068-0038-0003 և 0,58604հա, որի վրա առկա է կիսաքանդ շինություն ծածկ.

09-068-0038-0002/ նոր դպրոցական շենքի կառուցման և սպասարկման նպատակով նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը:

2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վ. Թանգյանը զեկուցեց, որ Նորավան բնակավայրում գտնվող դպրոցը որպեսզի չքանդվի, դպրոցին կից ազատ տարածք կա, նվիրում ենք ՀՀ-ին՝ դպրոց կառուցելու համար: Դպրոցին կից նաև կիսաքանդ շինություն կա:
Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 107-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՇԽԱՆԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԵՅՆԱՄԻՆ ԹԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման 28-րդ կետը.

1. Տալ նախնական համաձայնություն Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով «ԱՐԱՄԵ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Իշխանասար բնակավայրում դպրոցական շենքի կառուցման աշխատանքներին:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 108-Ա/

Ավագանու անդամներ

ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՇՈՏ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԲԵԼԼԱ ԹԱՄՐԱԶՈՎԱ

ՀՐԱՉՅԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԱԽՇՈՒՆ ՅԱԶՈՒԼՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՋԻՎԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Կարեն Իվանյանը _____